Ազամ 47 ամաց ծնաւ զԱմինադաբ: Եօթն ամիս շարժեցաւ Եզիպտոս, և ամենայն մարդ զգործն, յորում կայր՝ աստուածացոյց. զի ոչ ել զհետ Փարաւոնի: Դ նմին ամի կազմեաց զխորանն յօրինակ աշխարհի ամիսս եօթն ըստ եօթնօրեաց գործոյն Աստուծոյ: Տախտակքն ակնէին պայծառք և գիրն երկու դիմաց երեկը: Յառաջին տախտակէն յերկրորդն է ամիսէ: Հարիւր քսան ամաց մեռաւ Առվակն և թաղեցաւ իւր գաւազանաւն:

Ամինադաբ լեալ 45 ամաց ծնաւ զԵպյասոն: 3689  
Քոյրն Կայասոնի Եզիսաբեթ տուաւ կին Եզիազարուքահանայի, յորոց ծնաւ Փենէէզ. որ ապրեցաւ 370 ամ: Դաւանոս եղբայր Եզիպտոսի յիսուն գտներօքն կոտորեաց զյիսուն որդիս եղբօրն իւրոյ. միայն մնաց Լինգոս իմաստուն՝ աչացեալն յամենայն կողմանց: Փիւնիկս և կադմոս եկեալ ՚ի Փիւնիկէ արարին գիր Յունաց. ՚ի սոցանէ գտաւ թուականութիւնն, զի վաճառականք էին: Խոկ աստեղաբաշխութիւնն գտաւ ՚ի Օռուրաստրա և ՚ի Քսարուստրա քաղգէացոց, զի երկիրն պարզ և անամբ է միշտ: Խոկ երկրաչափութիւնն գտաւ առ Եզիպտացիսն, զի ՚Անգոս գետ յամենայն ամի առողանէ զերկիրն, և ասպանաքաւն ձողաչափ առնեն զանգս: Խոկ երաժշտականութիւնն գտաւ առ Թրակացիսն, զի ՚ի մէջ ծովուց են՝ ուսան ՚ի Հնչմանէ յուշկապարկաց: Խոկ Պլրամիւթէս զգար և զկրծասն եղիտ:

Կայասոն՝ քառասունեչորսամերայ ծնաւ զԱպմոն: 3733  
Եւ եկաց Յեսու իշխան յետ Առվախիսի ամս 27, և 110 ամաց կցոս մեռաւ: Սա անցոյց զԻսրայէլ ընդ Յորդանան, ձայնիւ էառ զԵրիքով. սպան 29 թագաւորս և զերկիրն Քանանու ձվիակաւ ետ որդւոյն

“Հետո կեզդի : Աստ Տորք. — իսկ Քանիդէս քանանացի եկն ՚ի Հայութ :

3768      Սաղմոն երեսուն և հինգամեայ ծնաւ զԲայոս ՚ի Հռաքաբայ : Աստ Փիլարտոսն բարուախօս ամենայն կենդանեաց . և արիսպագոսն շինի յԱթէնս : Դոն թօնիկէլ ամս 40 : Աւովդ յերկուց ձեռաց յաջողուած : Եւ Սամեզար , որ սպան ՚ի Փղշտայոցն զհարիւր այր մածիւն ամս 90 : Աստ Հաւանակ , Վաշտակ , Հայկակ , Ամրակ , Առնակ : Շառայէ Իսրայէլ այլազեացն ամս 18 :

3876      Բայոս հարիւրեսութամեայ ծնաւ զՈվեէթ ՚ի Հռութայ : Դեբովբայ և Բարաք ամս 40 . Գեղէն ամս 40 . սորա էին 70 որդիք : Աքիմելէք ամս 3 . Թոովլայ ամս 23 . Յայիր ամս 22 : Աստ Շաւարչ , Նորայր , Վատամ , Կար , Գրուկ : ՚Ի Յոյնս Յովն սպարապետ Աթենացւոց , յորմէ Յոյնք անուանեցան : Իսկ ՚ի Հռոմ հարիւր իմաստասէրք ՚ի միում գիշերի երազ տեսին եօթն արեգակունս , և վեցերորդն սպայծառ քան զամենայն , զոր Սաբիլէ թագուհին մեկնեաց ՚ի վերայ եօթն դարուցս . իսկ պայծառ դարձն , որ ծնաւ դՔրիստոս : Թագուորեաց ՚ի թերայիդ Ապողոն երաժիշտ , որ յերգելն շարժէր զքարինս : Այլ և Դեղաւլայ հիւն և նկարիչ՝ զպատկերս զոր առնէր շարժուն թուեցուցանէր : Հերակլէս զիւլիոն աւերէ :

3977      Ովեէթ հարիւր և մի ամաց ծնաւ զՅեսսէ : Յեփածայի ամս վեց . սա զգուստըն իւր Եղիպէ իւր խաչ անուանեաց և զոհեաց Աստուծոյ : Ասերոն ամս 7 . Իլոն ամս 10 . Ղաբդոն ամս 8 . Սամսոն քաջ ամս 20 : Աստ Հրանդ , Բնձակ , Գլակ , Հորայ , Օարմայր : Թագաւորէ Հռոմայեցոց Անիաս և այլ թագաւորք 16 . մինչև յՈւոմիլոս , որ զՀռոմ շինեաց ,

ամս 426: Ապա այլ թագաւորք վեց՝ ամս 207: Ապա հիպատքն, բրուտեանքն, ռամկապետքն, դիկտատորքն, հիւպատքն, մինչև ՚ի Գայիոս Յուլիոս ամս 460. և այլ ևս 46 ամք:

Յեսոէ հարիւրեւեսունամեայ ծնաւ զՊաւիթ 4107  
արքայ: Մեռաւ Օկս, որ է Արամաղդ, ՚ի Կրիտէ  
880 ամաց: Փիլիմնն արար դասս երաժշտաց և պա-  
տերս շարժուն: Խմագար դատաւոր ամս 40: Հեղի  
քահանայ և որդիք իւր ամս 20: Գերեցաւ տապա-  
նակն յայլազգեաց ամիսս եօթն: Սամուէլ մարգարէ  
և Սաւուղ ամս 40:

Դաւիթ արքայ ամս 40 և մեռաւ 70 ամաց: Աստ 4147 P. 4165  
Պերձն բազմակեաց: Դաւիթ քանամեայ սպան զՊո-  
ղիաթ, և ՚ի տասներորդ ամի թագաւորութեանն իւրոյ  
եհան զտապանակն ՚ի տանէն Աքեղդարայ: Գահանայ  
Արիաթար, մարգարէք՝ Գաղ, Ասափ, Եաթան: —  
Արար (Դաւիթ) զՊ ետացիսն 24 դասս սաղմոսաց  
առաջի տապանակին:

Սողոմնն ամս 40. սա ՚ի չորրորդ ամին շինեաց 4162 P. 4169  
զտաձարըն սքանչելատեսիլ և կարգեաց զդասս Պե-  
տացոցն: Այլ մի Արգամանոս անուն ՚ի Տիւրուսէ  
լուծանէր ամենայն առակս Սողոմնի, և ինքն առ-  
նէր այլ առակս, որով տարակուսէր Սողոմնն: Աստ  
էին իմաստասէրքն Հոմերոս և Խոփոդոս. մարգարէք՝  
Սաղովկ, Արիայ, Սամայ. քահանայ՝ Սաղովկ, արար  
զերգևոնն:

Ծոբովամ ամս եօթնետասն: Տասն ցեղք Խորայելի 4186  
թագաւորեցուցին զԱրեբովամ զորդին Եաբատայ ամս  
22: Ել Սօսակիմեգիպտացի և կողովտեաց զտաձարն:  
Ուարգարէք՝ Խուղ, Յովա, Յովէլ, Ազարիա, Ենանիա:

Արիայ ամս երեք՝ Խորայելի. Եաբատ՝ ամս երկու  
կարձաւրաց:

- 4230 Ասայ ամս 41՝ Խսրայելի. Բայաս ամս 24. Ելաց  
ամս 2. Օքամրի ամիսս 7. Ամրի ամս 12. — սա  
զնեաց զլեառն Սամիրոն, շինեաց քաղաք և անուան  
նեաց Սամարիա, յետոյ կոչեցաւ Մեթաստիա, որ է  
Մամլուդ:
- 4255 Յովկափաթ ամս 25՝ Խսրայելի. Աքայաբ ամս 22.  
Ոքողիա ամս 2: Մարգարէք՝ Եղիս, Եղիսէէ, Յեսու,  
Ողիէլ, Միքիա՝ որդի Յիմզայ:
- 4262 Յովրամ ամս 8՝ Խսրայելի. Յովրամ ամս 12՝ Խս  
րայելի. յեօթներորդ ամին վերացաւ Եղիս հրեղէն  
կառօք յերկինս:
- 4271 Ոքողիա ամս մի: Գողողիա, մայր սորա, ամս եօթն  
Խսրայելի. Յէսու ամս 28. — սա կոտորեաց գեօթա-  
նասուն որդիսն Աքայաբու: Մարգարէք՝ Ազարիա,  
Յովևադաք՝ որդի Ուաբաքիմայ, որ այժմ են յերկրին  
երանելեաց: Կարքեղոն քաղաք շինեցաւ Ճիթրիկէ:
- 4311 Յովաս ամս 40, քահանայ Յովիդայ, որ եղ զիո-  
րբանն ՚ի տաճարին և եկաց ամս 130՝ Խսրայելի.  
Յովաքազ ամս 17:
- 4340 Ամեսայի ամս 29 Խսրայելի. Յովաս ամս 16. Յե-  
րամ ամս 41:
- 4392 Ողիս ամս 52: Ել թագզաթբասար և գերեաց  
զՅուդայ և զԵրուսավէմի մեծ մասն, և այս սկիզբն  
գերութեանն Խսրայելի: ՚Ի 49 ամին Ողիս եղաւ  
առաջին ոլոմպիստին: Խսրայելի՝ Օքամրիա 6 ամիս,  
Մելում 45 օր. Մանայեմ ամս 10. — սա ետ զմի  
յունի երբնջոցն սակս հարկի՝ Փուայի արքայի. Փա-  
կէէ ամս 10: Մարգարէք՝ Անանիա, Ովսէէ, Ամովս,  
Յովէլ, Ասայի, Յունան, Նաւում: Ասա թագաւորէ  
Մարաց Վարբակ և այլ 8 թագաւորք ամս 270. սոցա  
վերջինն Աժգահակ էր, զոր սպան Տիգրան հայ: ՚Ի  
սոյն աւուրս թագաւորեն Քաղղէացիքն, որ Բաբելո-

ցիք կոչին: Փուայ (և այլ) երեքտասասն թագաւորք զամս 200 մինչև ց'արեհ Արշակուիր, զոր սպան Տիգրան: Աստ թագաւորեն Մակեդոնացիք, Կարանոս և այլ 40 թագաւորք զամս 647: Առցա վերջինն սուտ Փելիպոսն էր: Դարձեալ թագաւորեն Լիդացիք, Արգետայ և ինն թագաւորք 230 ամ:

Յովաթամ ամս 16՝ Խարայելի. Փակէէ ամս 20. 4408  
Արքազ ամս 16. Ովսէէ ամս 9: Աստ գերեաց Սաղմանասար զիսրայէլ և եքարձ զթագաւորութիւնն: Մարդարէ՝ Միքիա յերկոտասանիցն: Խարայելի կացին թագաւորք 19 զամս 250: Առաքեաց Սաղմանասար չորս ազգս կառօք իւրեանց պահապանս Վամարիայ. իսկ ՚ի սատակել զնոսս գաղանայն առաքեաց զքահանայն Եզր և զհինդ զիրս Մովսիսի ասորերէն:

Նուկիա ամս 29: Եւ Աբնեքարիմ ՚ի վերայ 4453  
Նըրէաստանի էառ զեիկիրն և սատակեցաւ 185 հազարաւն: Որոմիլոս զՆոոմ շինեաց և Ծիւզաս իշխան զՌիւզանդիոն, զոր յետ 970 ամի Կոստանդիանոս մեծապէս շինեաց: Աստ Արքունն:

Մանասէ ամս 55. սա ասաց „զտէր ամենակալն“ 4508  
՚ի Նինուէ ՚ի գերութեանն և արձակեցաւ: Աստ Բազուկ: Ամովս ամս 12. Յովսիա ամս 31: Աստ Հոյ, Յուսակ: Մարգարէք՝ Խողդիայ, Երեմիա, Առփոնիա: Աստ Տուբիթ և Տուբիա՝ փեսայ Հուաքուէլի:

4551 P. 4553

Յովաքազ ամս 3. զսա գերի տարաւ Կաքաւով Փարաւոն կազ: Աստ Կայպակ, Ակայորդի: Եղիակիմ որ և Յովակիմ ամս 12: Կարուգոդոնոսոր զՆըրէաստան հնագանդեաց և հարկ եղ: Յովակիմ, որ և Յեքոնիա՝ ամս 3: Աստ թագաւորէ ՚ի Հայս Պարոյր առաջին և այլ 19 թագաւորք. — սոքա բարձան յԱղեքսա-

P. 4566

P. 4569

Պ. Հեղեկիւն

Նդրէ : Արգարէք՝ Շարուք, Աատթանի, որ և  
Սեղեկիա ամս 11: Հայոց՝ Հրաշեայ, Վրաց առաջին  
թագաւոր Փառնաւազ, որ ի վեց լեզուէ արար  
զվրացերէնն, նա և զգիր նորա: Եկն Եաբուքողոնոսոր  
պաշարեաց զԵրուսաղէմ և էառ զնա, և կուրացոյց  
զՍեղեկիա. և յետ եօթն ամսոց Եաբուզարդան դա-  
հճապետն այրեաց զտածարն:

Պ. 4636 Յեքոնիա 37 ամ ի բանտին ի Շարելոն ծնաւ  
զՍաղաթիէլ : Յութն ամի գերութեանն մարգարէք՝  
Դանիէլ՝ երեք մանկունք, Եղեկիէլ. իսկ ի 38 ամի  
գերութեանն մարգարէք՝ Անգիա, Օաքարիա, Ամբա-  
կում, Ապղաքիա, Սաղաթիէլ, Եզր, որ Հոգուով  
սրբով գրեաց ի մոտաց զամենայն գիրս աւրինաց և  
մարգարէից : Խմարովդաք արքայ Եհան զՅեքոնիա  
ի բանտէն, զհետ նորա Շաղտասար, որ ետես զձեռնն  
հրեղէն, որ գրեաց յորմ զերիս զիրս՝ մանէ, թակեղ,  
փարիս զոր մեկնեաց Դանիէլ, որ և ետես զտեսիլ  
չորից զազանացն : Աստ Փառնաւազ, Պանց, Կռո-  
նակ : Քիրամ արքայ Օուրաց եկաց ամս 30. սա էր  
յաւուրս Դաւթի:

Պ. 4692 Սաղաթիէլ լեալ ամաց 56 ծնաւ զՕօրաբարէլ:  
Աստ յերկրորդում ամի Դարեհի մարի լցաւ առաջին  
եօթանամներորդ ամ գերութեանն, և արկաւ Դա-  
նիէլ ի գուր զառաջինն և ետես զտեսիլ եօթներո-  
րդաց եւթանամնից : Աստ Դարեհ Արշամայ, առ որ  
գրեաց Օօրաբարէլ, եթէ քան զամենայն զօրաւոր  
Ճշմարտութիւնն է : Աստ կիւրոս պարսիկ զամս  
երեսուն : Սա սպան զերիս մանկունսն, և կրկին  
արկաւ Դանիէլ ի մէջ եօթն առիւծոց ի գուրն :  
Կիւրոս ետ ցՍաղմանասար հանդերձապետն Յուղայ  
զ5469 անօթս սակեղէնս և արձաթեղէնս ի սպասուց  
տաճարին, և զհինդ բիւրս ի Հրէից արձակեաց ի 17

ամի թագաւորութեան իւրոյ, որք եկեալ հիմն արկին տաճարին. բայց անկատար մնաց վասն շրջակայ աղդացն: Խոկ յ30 ամին Վիշտասպէն ել Օօրաբաբէլ յԵրուսաղէմ և շինեաց զտաճարն զամն չորս. և աստ լցաւ երկրորդ եօթանասուն ամ գերութեանն Խորայելի և սկսան եօթներորդքն Դանիելի: Դօօրաբելէ ցՅուղայ Մակարէ 332 ամք են. ՚ի Յուղայէ ցծնունդն Քրիստոսի 451 ամք: Երթներորդքն Դանիելի եօթանասուն և կէս ամք են: Խոկ մի կէսն Քրիստոսի 34 ամք են\*): Քահանայ՝ Յեսու, որդի Յովսեղեկեայ: Տմուրիս բամբիշն Մասագեցոց սպան զկիւրոս: Խոկ Յուղիդ բեղաղուացի սպան զՀողեփեռնէս թաթար թուրք:

Օօրաբաբէլ լեալ ամաց 56 ծնաւ զԱբիուդ: 4680  
Աստ Արտաշէս երկայնաբազուկ, որ ՚ի հինգերորդ ամին իւրոյ առաքեաց զԱզր քահանայ շինել զպարիսն Երուսաղէմի. աստ Եզր որոշեաց զՀըրէայսն և զբարելացի արս և կանայս: Խոկ ՚ի քսաներորդ ամին արձակեաց Արտաշէս զԱկեմի տակառապետն օգնական Եզրի: Սա եզիս զհուրըն ՚ի ջրհորին, որ վառեցաւ տիղմն յետ 70 ամաց: Աստ Մուրթքէ հաւատարիմն և Եսթեր փոքրիկ աղբիւրն: — Վայ զհաման ամաղեկացին: Քահանայք՝ Յակիմոս և Եղարիսոս: Աստ Փառոս, Հայկակ, Երուանդ, Տիգրան, Բար: 4727 P. 4725

Աբիուդ լեալ ամաց 45 ծնաւ զԵղիակիմ: Աստ Տիրան, Վահագն, Առաւան, Կերսէչ: Քահանայ՝ Յուղայ:

Եղիակիմ լեալ ամաց 60 ծնաւ զԱզովը: Աստ Օարեհ, Արմոդ, Բագամ, Վան, Վահէ, զոր սպան Աղեքսանդր:

4787 P. 4785

աշխարհէ.

**Ազովը լեալ ամաց 32 ձնաւ զԱպովկի:**

- P. 4824 4826      **Սաղովկի լեալ ամաց 31 ձնաւ զԱքին : Քահա-**  
 P. 4855 4857 **նայք՝ Յովչաննէս, Յադդուս: Աստ Պատառն և Արի-**  
**ստոտել ստագիրացի. իսկ Աղեքսանդր մակեդոնացին**  
**տիեզերակալեաց և զերեսուն և հինգ թագաւորս կորոյս**  
**յաշխարհէ. Մակեդոնացոց 40 թագաւորք են յետ և**  
**յառաջ Աղեքսանդրի զամս 647 : Աստ երկու թա-**  
**գաւորք ասիացւոց՝ Խնտիգոնս ամս 18 և Դեմետրոս**  
**ամս 17 : Բնդ սոսին թագաւորեցին Պատգոմեանքն**  
**յիշիալտոս, որք սապարիկօք չափեցին զերկիր՝ զբնա-**  
**կութիւն մարդկան. 42 թագաւորք ամս 296 :**

- 4889      **Աքին լեալ ամաց 34 ձնաւ զԱղիուդ. քահա-**  
**նայք՝ Ոնիա, Ամմոն արդարն, Եղիազար: Աստ 72**  
**թարգմանիչքն հրամանաւ Պատգոմեայ զգիրս Եղրայե-**  
**ցոցն ՚ի յոյն լեզու փոխագրեցին: Ամմոն ծերունի:**  
**Աստ թագաւորէ Ասորոց և վերին կողմանցն Շա-**  
**բելացոց Աելեկիոս ամս 38. թագաւորք 17 զամս 244.**  
**՚ի սոցանէ ապստամբեաց Արշակ քաջ ՚ի Շահէ քա-**  
**զաքէ ամս 31. թագաւորք 13 զամս 454 :**

- 4919      **Եղիուդ լեալ ամաց 30 ձնանի զԱղիազար. քա-**  
**հանայք՝ Վանասէ, Ոնիայ, Շեսով, Մենեղսոսոս, Ամկիմոս. առ**

- P. 4912 4981 **Յեսու Աիրաքայ Խրատագիր՝ նմանեալ Աողոմոնի:**  
**Եղիազար լեալ ամաց 62 ձնաւ զԱմտթան. քա-**  
**հանայք՝ Ոնիայ, Յեսով, Մենեղսոսոս, Ամկիմոս. առ**  
**սոքօք Անտիոքոս թագաւոր բռնադատէր զերէայսն**  
**թօղուլ զօրէնս. յորմէ չարչարէին Եղիազար ծեր**  
**քահանայ և եօթն որդիքն թողասայ և Շմաւոսնի՝**  
**Ակար, Վակար, Խորէն, Խորսէն, Ամինազար, Թա-**  
**րսիս և Գաղիգէ. առ որովք Մատաթիա քահանայ ՚ի**  
**Մովգէիմ զեղջէ և Յուղա Մակարէ և վեց եղարք**  
**նորա զինեալք և սաղաւարտեալք հալածէին զզօրս**  
**Ասորոց: Աստ Արտաշէս, Արշակ մեծ, որ թագաւ-**

որեցոց Հայոց գեղքայր իւր Վաղարշակ ամս 22.  
մեռեալ ՚ի Վճրին :

Վատթան լեալ ամաց 38 ծնաւ զՅակոր. քահանայք՝ Յովաթան ամս 10. Շմաւոն ամս 9: Աստվարշակ թագաւորէ ՚ի Հայո. թագաւորք 26 զամս 562:

Յակոր լեալ ամաց 60 ծնանի զՅովսէփ. քահանայք՝ Սիմեոն ամս 8. սա առաքեաց ՚ի Հռոմ վահան ոսկի և ետ քերել տախտակ պղնձի ՚ի նշան ուխտի. Հիւրկանոս ամս 26. Արիստաբուլոս ամ մի: Աս ՚ի վերաց քահանայութեան թագ եղ: Աստ Արշական, Արշանակ, Արշեղ, իսկ ՚ի Հայո՝ Արշակ, Արտաշէս, Տիգրան, Արտաւազ սակաւակեաց :

Յովսէփ սատուածահայրն 41 ամաց էր, յորժամ 5198  
ծնաւ ՚ի Վարիամայ տէրն մեր Յիսուս Քրիստոս ՚ի  
Բեթղյահէմ: Քահանայք՝ Յոհաննէս ամս 27. Աղէք-  
սանդրա կին ամս 9. Հիւրկանոս ամս 34: Ապա  
թագաւորէ Հերովդէս այլազգի, յորոյ յերեսուներկու  
ամին ծնաւ Քրիստոս, Աւգոստոսի 42, Արշաւրայ 24:  
Հայոց Արշամ, որ հարկեաց Հռոմայեցոց. և Արգար:

ՅԱղամայ մինչև ՚ի ջրհեղեղն են ամք 2262 \*).  
անտի մինչև յԱրահամ ամք 1019. անտի մինչև  
յելսն Խրացելի յԵպիստոուէ ամք 430. անտի մինչև  
՚ի Ասղոմանի շինած տաճարին ամք 480. անտի մինչ  
՚ի Օօրաբարելի շինած տաճարին ամք 477. անտի  
մինչև ՚ի ծնունդն Քրիստոսի 530. միանդամայն ամք  
5198.

\*) P. 2242. անոնք յաշտաբանին — 525. անոնք յԱղամայ ան 417.  
անոնք յեւս էպոյելէն — 505. անոնք նիւչև ՚ի Առաջնոնի շինուածանին — 480. անոնք ՚ի Օօրաբարելէն շինուածանին — 511.  
անոնք ՚ի ժնունդն քրիստոնէն — 518. միանդամայն ան 5198. նու (?)  
չլուր, ՚ի ժնունդն քրիստոնէն ՚ի Հայ նիւշ ան 553.

Մինչև ցայս վայր առաջնորդ ունելով զնախապետու կթագաւորս՝ շարայարեցի ի նոսա զպիտանիսն պատմութեանցս, համառօտելով զմի ի հազարաց. իսկ յայսմ հետէ անկայ ի ծուփս խորհրդոց, զի առենայն աշխատութիւնք մեր վասն Հայաստան ազգիս և աշխարհիս պատմութեանց են. սակայն զի ոչ են ի բնէ ինքնակալ իշխանք և թագաւորք մեր, հարկ է զի ընդ որոց ձեռամբ անկեալ կան, զնոցուն թագաւորսն շարայարել, որպէս զի մերն ամբողջ կոլցի զկարգն: Արդ որպէս ի սկզբանն ի Հայկայ հետէ հնագանդեցան Հայք Ասորոց, յետոյ Մարաց, Պարսից, Վակեղանացոց, Արշակունեաց, Տաճկաց, Թուրքաց և այժմ Թաթարաց, սոյնպէս և երբեմն Հռովմոց, յետոյ Յունաց և այժմ պարտ է զՀռովմս կարգաբանէլ և զՊարսիկս:

Միածին Որդին ի Հօրէ՛ եղե միածին որդի ի մօրէ՛ ի Մարիամաց աստուածածնէ: Ութօրեայ թլփատնալ ի բաղուկս Յովսեփայ ի Օ. պարիսայ քահանայապետէ, քառասնօրեայ ի տաճարն ընծայեալ՝ ի Աիմեռնէ և յԱննայէ գոհաբանեալ, որպէս ի մոգուցն պատարագոք պատուեալ, երթեալ Աշղիպտոս և 500 բիւր կուս կործանեալ, և զպալասանին պատճառն պատմութեան իւրոյ թողեալ՝ դարձեալ և ի Գալիլիս սնեալ երկուասանամեայ ի տաճարին վարդապետեալ, երեսնամեայ ի Յորդանան ի Յովհաննէ մլրտեալ, և ծիրանի բոյարորբ բարբառով ի Հօրէ՛ և յարփիխախա-

դաց աղաւնակերպ Հոգւոյն վկացեալ, ՚ի Սունոբայ ընդ սեռս սատանայական մրցեալ և յաղթեալ և նշանօք բաղմօք բարեհոչակեալ, երկոտասան և եօթանասունեերկու աշակերտս ընտրեալ և նոքօք զտիեզերս աշակերտեալ, ՚ի խանդուցող Հրէից խաչեալ, և ՚ի Յովսեփայ թաղեալ, զդժոխս աւերեալ և զորս հաւատով զնա ծանեան աղատեալ, ու մարդ մեզաւոր ած պաշտեցեալ և ջ կախարդ անզեզջ մնացեալ. զնոսառ աղատեալ ինքնիշխանութեամբ յարուցեալ և յայտ յանդիման յերկինս վերացեալ, զՀոգին սուրբ յառաքեալսն առաքեալ, որք զերեսուն հազարս աշակերտեցին ՚ի Հրէից, և ապա ընթացան յոլրոտս տիեզերաց և դարձուցին զազգս մարդկան ՚ի խաւարէ կոապաշտութեան ՚ի Լոյս աստըւածգիտութեան :

Թագաւորին յաւիտենից մատուցին մոգքն զընծայս խորհրդոց, Վելքոն պարսիկ, Դարասապար հնդիկ, Շաղոտասար արագ: Առաքեաց Արգար առ Յիսուս գիր աղաչանաց, և նա առաքեաց նմա զպատկերն իւր՝ նկարեալ ՚ի դաստառակի, զոր յետոյ Նիկիփոր տարաւ ՚ի կոստանդնուպօլիս:

Խաչի Յիսուս յԵրուսաղէմ վասն մարդկան : 34 P.41  
Փիլոն իմաստասէր և Գալիանոս բժիշկ:

Բառնաբաս\*) զԱնտիոք գարձոյց. Վատթէոս գրեաց զաւետարանն յԵրուսաղէմ երբացեցի բարբառով:

Սովն զոր ասաց Ագաբոս. Մարկոս գրեաց զաւետարանն յԱղէքսանդրիա լատին լեզուաւ:

Պուկաս գրեաց զաւետարանն ՚ի Հոռոմ և աւարտեաց յԱնտիոք ասորի զըով զՅակոբոս սպանին Հրէայքն և զխաչն Քրիստոսի թաղեցին: Ներոն զՊետրոս և զՊօղոս սպան ՚ի Հոռոմ:

\*) P. Պետրոս.

- P.72 70 Վ եսպասիանոս կոտորեաց զշրէայսն և եբարձ զքահանայութիւնն և զթագաւորութիւնն :
- P.86 96 Յովհաննէս գրեաց զաւետարանն յառաջ ՚ի Պատմոս, յետոյ յլչփեսս յունարէն :
- P.132 89 Արտաշէս շինէ զՄատաշատ: ԱԵկունդոս լուակաց իմաստանէր: Առաջին ժողով Նիկիոյ. որ զՍարէլ նզովեաց: Ակիւզաս, Ախմաքոս, Թնէոգորիան: Հինգերորդ թարգմանութիւն գտաւ յԱրիբով. վեցերորդ թարգմանութիւն գտաւ յԼշմաւոս. եօթներորդ թարգմանութիւն արար Որոգինէս վեցիջեան:
- P.291 287 Թագաւորէ Տրդատ և չարչարէ զսուրբն Գրիգոր ամսն երկուս. և արկանէ ՚ի վիրապն ամս 13. և ինքն սպանանէ զսուրբ Հոփիսիմեանս ոգիս 36 և հարեալ բարկութեամբ ՚ի Տեառնէ՝ լինի խոզ աւուրս 75 և բժշկի հոգւով և մարմնով ՚ի ձեռն սրբոյն Գրիգորի որդւոյ Անակայ և Ազոհեայ: Զեռնազրի սուրբ Լուսաւորիչն կաթուղիկոս ամենայն արևելից և հիւսիոյ, և բերէ ՚ի Հայս զնշխարս Յովհաննու և Աթանազինեայ՝ աների իւրոյ և գնէ ՚ի յԻննակնեայսն և տայ զտեղին ՚ի ձեռն Օւենորայ եպիսկոպոսի: ՚Աս արար զՏարոնոյ Պատմութիւնն, և Ագաթանգելոս զՀայոցն :
- Հաւատան յԱստուած Վիրք և Միհրան թագաւորն ՚ի ձեռն ՚Եռնեայ: Աւանայր թագաւորն, և ամենայն Աղուանք ՚ի ձեռն սրբոյն Գրիգորիսի, նոյնպէս և մեծն Կոստանդիանոս ՚ի ձեռն սրբոյն ԱԵզբեատրոսի :
- Երթան Տրդատ և սուրբն Գրիգոր ՚ի Հռոմ ՚ի տեսութիւն նոցա եօթանասուն հազարօք. զնեն ուխտ ընդ միմեանս երկու արքայքն՝ զարիւն Քրիստոսի խառնել ՚ի մելանն, զի մի զրժեսցեն: Կառուն Հայոց զձախ Անդրէի և յԵրուսաղէմ զսուրբն Յակոբ տեղի իջևանի և զսնարից կուպայն և կանթեղ մի ՚ի վերաց

գերեզմանին Քրիստոսի: Խակ իջումն լուսոյն խնդրուածք է սրբ լուսաւորչի: Խակ ի դառնալն ի Հայս հարկանէ Տրդատ զ Առնն ծոպանաձիգ, շինէ գրերդն և զսարաւոյթն Գառնոյ, աւերէ զ ՅԵկեղատան, և շինէ զ Դավթէծ:

Ժաղովն Նիկիոյ 318 Հայրապետաց, որք նզովեցին 325 P.330 զ Արիսոս: Գիւտ խաչին յԵրուսաղէմ ի Հեղինեայ:  
Կապուհ յարոյց հալածանս եկեղեցւոյ յարեւելս:  
Հովիւք թաղեցին զսուրբն Գրիգոր: Երևումն սուրբ խաչին յԵրուսաղէմ յաւուրս կիւրզի:

Ենդրէաս զշարադրութիւն տոմարացն յօրինէր 352 P.354 զերկհարիւրակն: Ըինէ Խոսրով զ Դուկինէ/Մովսէս և Դանիէլ 3870 սրբովք կատարին ի Դիզափայտն:  
Երտեմնի ընթերցուածն: Պապ և Եթանագինէս կանամբք և որդւովք ըմպէին յեկեղեցւոջ հուր անկեալ ի վերուստ անդքնդասոյզ արար զնոսա զամենեսին:

Սուրբն Կերսէս կարգեաց ի Հայս 900 իշխանս 366 P.370 բարձի, չորս հարիւր եպիսկոպոսունս և երկու հաղար վանս: Երևեցան զօրք հրեշտակաց՝ գնալով ընդ երկինս:  
Աստ աստուածաբանն, Բարսեղ, Նիւսային, Եպիփան, որ յայտնեաց զաղանգս մինչ ի Քրիստոս և ի Քրիստոսէ մինչև ցինքն:

Ժողովն Կոստանդնուպոլիսի 150 Հայրապետաց, որք 381 P.396 նզովեցին զ Մակեդոն: Օնաւ յԵնտիոք մանուկ մի մուրվօք, չորսոտնի և չորսձեռնի: Գերութիւն մեր ազգիս ի Կապհոյ և ոսկերաց թագաւորացն:

Տեսանէ սուրբն Աահակ զտեսիլ ապագային: 402 P.410 Յեմաւուս ծնաւ տղայ ք զլիսի դ ձեռնի. ք տարի ապրեցաւ և դ օրով մինն մեռաւ յետոյ: Աստ Ոսկի բերանն, որ արար երկոտասան հաղար ծառս, որ են ութ հարիւր զիրք: Յայտնեցան նշխարք նախավկային ի ձեռն Պունկիանոսի քահանայի: Եւթաղի

Կառավարութեան

Ազգականդրացի յօրինեաց զցանկ առաքելոցն և զգութոցն; Թագաւորքն Յունաց և Պարսից բաժանեցին զաշխարհս մեր ՚ի վերայ ինքեանց :

P.424 423 Ոկիզբեն դպրութեանց հայ զրոցս ՚ի ձեռն սրբոյն Սահակայ և Մեսրովպայ, որք վաթուն աշակերտոք աշխատեալք թարքմանեցին զամենայն Հին և Կոր կտակարանս : Կատարեցան աշակերտքն Մաշաոցի յԱստղաբլուրն :

P.438 431 Փողովն Եփեսոսի երկու հարիւր եպիսկոպոսաց, որք նզովեցին զԵկսատոր : Առւրբն Մարտութայ շինէ զՄուֆարղին և մողովէ զ285000 սրբոց նշխարս :

P.460 449 Փողովն Եփեսոսի վասն Փլաբիանոսի : Մովսէս հայոց պատմազիրն : Արն Պարսամ որ 54 ամ ոչ նստաւ.

452 Բարձաւ թագաւորութիւնն Արշակունեաց և քահանայսպետութիւն յազգէ սրբոյն Գրիգորի : Վերափոխումն նշխարաց Ռակեբերանին : Յայտնեցան Անանիայքն ՚ի ձեռն Մալխութայ : Շինէ Անասուլ զկարնոյ քաղաքն հրամանաւ փոքուն թուզողոսի :

P.472 Փողովն քաղկեդոնի վեց հարիւր երեսունեւկեց եպիսկոպոսաց, որք նզովեցին զԱւտիքէս : Վիւտ զլայոց կարապետին յԱմեսիա : Կատարումն սրբոց Վարդանանց : Հրայրեացք ՚ի կոստանդնուպօլիս ՚ի ծովէ մինչև ՚ի ծով : Մին ամիս օգդ փոշի տեղեաց թիզ մի. ՚ի բազում տեղիս հուր վայթեցաւ և փողանման ամպ լուսաւոր երեեցաւ զաւուրս քառասուն : Առւրբ Շուշանիկ նահատակեցաւ և Անդրէաս զԿունեայ խաչն ՚ի Ապեր տարաւ : Պարտաւ շինեցաւ ՚ի Վաշէտ արքայէ :

500 Եպիստ Գատնիկ զնշխարս սրբոյն Գրիգորի : Առւրբն թամթուլ և Վարոս և Թիովմաս : Պատի կաթողիկոս պարսից : Պիղծն Բարձումայ, որ զ7700 եկեղե-

ցականս կոտորեաց : Վախթանկ վրաց թագաւորն զՏփիխս շինեաց : Առւրբն Ամեն սիւնականն : Աստ Վաչագան զնշխարս սրբոյն գտանէր, և 365 եկեղեցիս շինէր : Առւրբն Շուփհազից : Եղիշէ և Վազար ժամանակագիրք : Նիկոպօլիս և Նիկոմիդիա կործանեցամբ : Աստ սուրբն Երիցակ : Տեառնթագ և Վասակ և Վահան կատարին : Յակոբ սրբեցին արար 700 ձառս :

Կաւաստ 400 կոյս աղջիկ զոհեաց Ողի կոոց իւրոց : 520 P. 530  
Հուր անկեալ յԱճախոք այրեաց զարքունիսն և վեց օր ոչ շիջաւ : Գիւտ նշխարաց ժամդէսի առաքելոյն և Ամենդրիսոյ կուսին ՚ի ձեռն Կիրակոսի : Բարսեղ Ճոնն յաւուրս Ներսեսի շինողի . որ եօթն անգամ ետես դՔրիատոս . սա սրբազրեաց զշարակնոյս, որ Ճոնընտիր կոչեցաւ : Մարդամահ սաստիկ : Ենյայտ եղեւ ջուրն սելովամ յԵրուսաղէմ հնգետասան ամս :  
Հուր երկնային այրեաց գքալքաք : Երեւեցաւ ՚ի Կիլիկիա կին մի, որ զիրկ մի երկայն էր քան զամենայն մարդ, անկեր և անխօս, և ՚ի կուզպակսն մի փող առնոյր. եկաց բազում ժամանակս և անյայտ եղէ :  
Լցաւ երկհարիւրեակն Ենդրէասայ ՚ի մարտի 25 և P. 553  
յապրիլի 4 չկարացին գնալ, ուր սկիզբն էր, զի ինն լրմունք ՚ի մէջ էին : Վապ խափանեցան և իմաստունք ժամանակին կարգեցին զթուական Հայոց :

Ակիզըն թուականին Հայոց :

Սրբոյն Մովսեսի կաթողիկոսի հրամանաւն՝ Տարոնացին Աթանաս ՚ի Գլակայ վանաց արար զտոմար Հայոց : ՚ի պլէ թվին ասորոց, և յմձթ թվին եբրայեցոց և յդ թվին Հոռոմոց և ՚ի նզ թվին եղիպտացոց, և ՚ի Շ թուին եթովպացւոց և ՚ի... թվին արաբացոց.... թվին մակեդոնացւոց, ՚ի Է թվին Հայոց, սկսաւ թուականն տամկաց :

առաջային:

Առըբն Սովի ՚ի Յուստիանոսէ հիմնարկի: Յիզափը բուղիտ նահատակն: Գլուխեղեղն զՈւռհայ տանի: Ութն ամսով և շեթութիւն: Տէր Աքաս կաթողիկոս Ազուանից ՚ի Դարբանդայ ՚ի Պարտաւ գայ և գնէ զաթուն: Եղաւ հինգհարիւրեակն Ճ՛ղէքսանդրիա Ճշասայ և յայլ 36 զիտնաւորաց, (յորում) զոր իսինն պատառեաց: Կարծ ահագին ընդ ամենայն աշխարհ. տարածամ մահ և կայծակն ՚ի կողմն հիւսիսայ. վայ զԱճառիոք: Աչ աստուծային երեւեցաւ ՚ի սուրբ մատրանն և ՚ի սուրբն Արտոն աստուածածին՝ Յիսուս ՚ի գրկին: Զար և գառն ժամանակ. հինգ հազար աղջիկ քրիստոնեայք կամաւ անկան Ճ՛ղթլ գետ, զի առ խարսն տանէին: Նենդրացիքն կոտորեցան ՚ի Դորահարէ հրէէ: Իշխանք հայոց ապատամբեալ ՚ի Պարսից ձեռն ետուն ՚ի Յոյնս: Խաւարեցաւ արեգակն ժը ամիս: ՚ի Գայիոսէ\*) մինչեւ ցյետինն Յուստինոս 50 թագաւորքն փառնելք էին, իսկ ՚ի Տիբերէ և այսր թագաւորքն հոռոմ լինէին:

571 Վարդան Մամիկոնեան սպանանէ զԽոսրով պարսիկ իգամոլ և ինքն գնայ ՚ի Կոստանդնուպօլիս, և հինգ գրիւ արծաթոյ գնէ զարևելեան գուռն սուրբ Սովիին: Գրիգոր և Վրթանէս վարդապետք ՚ի Յոյնս գնացին. իսկ քաջաբան Ասորիք ՚ի Հայս եկին և երկորինն ոչինչ օգտեցան:

Մբատ Շաքրատունի գնայ ՚ի Վրկանք, որ է Սաղաստան, և գտանէ հայք մոռացեալ զԼեղու, և կարգէ եպիսկոպոս նոցա զՀարթէլ:

Ա. 50 Տիբանուն կաթուղիկոս աղուանից արար լուծմունք 500 գժար բանից:

Սաբայ նստի կաթողիկոս ՚ի Վիրս առանց պատրիարքին Անտիոքու:

\*) P. ՚ի պատշաճութեան:

Խաւարեցաւ կէս արեգականն 10 ամիս :

Երեխ Մահմէտն :

611 A. 60

Երկոտասան հազար շըրէայք գնան առ նա՝ տանելով զԳիրս ծննդոց :

Կամեցաւ կայսրն շերակլ կռուել ընդ Մահմէտի :  
Եկն այր մի առ նա և երեր նմա զզիրս շեմինդրոսի  
և ջեմինդրոսի\*), յորս կայր գրեալ, թէ 240 ամ տուեալ  
է նոցա իշխանութիւն :

Վըճէշ առառ ՚ի Տաճկաց :

Վիրք ՚ի բաց կացին ՚ի միաբանութենէ շայոց : 615 A. 74

Վաստիկ սով և սուր յԱղուանս :

Տէր Վիրոյ կաթողիկոս :

Տէր կոմիտաս մեծացոյց զվկայարան սրբոյն շռիփ-  
սիմեոս :

Տէր Եզր ընդարձակէ զվ կայարան սրբոյն Պայիա-  
նեայ :

A. 88

Ելք Տաճկաց ՚ի շայու :

Ժողով կարնոյ քաղաքի և Եզրայ հաւանիլն :

Սովն սաստիկ և հողմն քակիչ ընդ ամենայն երկիր :

Բարձան թագաւորք Պարսից՝ վերջինն Յազկերու, 637 A. 100  
որք տիրեցին զամս 418. Թագաւորք քսանեցորք :

Տաճիկք առին զաշխարհակալ իշխանութիւն.

զԳուին էտո Տաճիկն և 1200\*\*) կոտորեաց ՚ի սուրբ  
Սարգսին: Պատերազմ վասն նկարեալ եկեղեցւոյ, զոր  
ելոց Յովհան Մայրավանեցին:

Շինողն Աւեսէս շինէ զառապարի սուրբ Պրիգորն՝ 641  
զզարմացուցիչն տիեզերաց, որ քակեցաւ ՚ի Տաճկաց :

Երեւեցաւ խաչն Վարագայ ՚ի ձեռն թողկայ :

A. 113

Փիլոն Տիրակացի :

Յակոբ Ուռհայեցի արար զնոր թարգմանութիւն :

\*) P. ՚ի ջինդոսի.

\*\*) P. 12,000.

ովեառակ.

Հաւատան Հոնք յԱստուած ՚ի ձեռն Խսրայելի:

Անանիա վարդապետն արար անշարժ տոմար:

Գրիգոր իշխանն շինէ զԱրուծայ եկեղեցին և տէր

Ներսէս զԲագուանայն:

Հողմ սաստիկ ել ՚ի հիւսիսյ, փլոյց բազում  
եկեղեցիս և շրջեաց զանտառս:

A.130 Եշեւեցաւ աստղ մի գիսաւոր՝ նշան սովու և սրոյ  
և մեծի սասանութեան:

690 Տէր Գրիգորէն Արշարունեաց եպիսկոպոս, արար  
զընթերցուածոց մեկնիչն, ՚ի խնդրոյ Ներսէհի կամսա-  
րականի:

Տաճկունք բարձին զպատկերս ՚ի դահեկանէ և  
գրով գրոշմեցին:

Վ Եմքիլ և Միհր թագաւորք Վրաց հարին զՎըր-  
ուանն մերձ յԱնակոր բերդն. իսկ Եօթնակնեան  
գետն տարաւ ՚ի տաճկաց 23000 մարդիկ և 35000 ձիս,  
վասն որոյ հարաշիսծղալ և ցխէնիսծղալ ասին:

A.150 696 — Հայր Սողոմոն արար զտօնականն ՚ի Մաքենիս:  
Խլաթայ ծովն սառեաւ: — Զասւրբ Գրիգորի  
վանքն այրեցին:

Մահմէտ զԱւան էառ:

Կշոտ զԴարօնից սուրբ փրկիչն շինեաց:

A.160 704 Կամս ամիրացն զՀայոց իշխանսն այրեաց՝ ութհա-  
րիւր ՚ի Նախջաւան, և չորս հարիւր ՚ի Խրամ:

Կրտլաղիզ շինեաց զԴարին. Սուլիման զԴարբանդ  
քակեաց, և այլ շինեաց:

A.170 Կ ամայ Հեշմայ հրամանաւ Հերթն եկեալ ՚ի  
Հայս աշխարհագիր արար:

Սովն սաստիկ և ջնջումն պատկերաց յեկեղեցոյ:

Մահն Կշոտոյ և խոզապանութիւն:

Եղիս օրէնս եղ՝ ոչ բմպէլ Տաճկի գինի:

719 Յովհան (Օձնեցի արար ժողով ՚ի Մանազկերտ

և Եհան զհոռոմն և զհայան իւր ՚ի հայոց : Առվ սաւստիկ, և Շաբան զԱքենացոյ սուրբ ուխտն այրեաց :

Զրհեղեղն զՈւռհայ տարաւ:

Արդամաշն :

Վայոց Զորոյ ընկղմումն :

՚Իզօրութենէ խաչին Քրիստոսի 50 բիւր տաճիկք  
ծովասոյզ եղեն ՚ի Կոստանդնուպոլիս, և արձակեցաւ  
Մոլիմ ՚ի Լևոնէ պատմել զփառս Քրիստոսի:

Վահան գողթնացի կատարեցաւ:

Զափր շինեաց զԲազտատ քաղաք ՚ի Վերայ  
Տեղրիս գետոյ :

Կարժն ահագին, որ թռոյց զգեօղն ՚ի թափօրական լեառնոտանէն, և բազում քաղաքք և գեօղք և գաւառք փլան: Խրկու նոր աստղ երկեցան՝ մին յարեւելք և մին յարեւմուաք: Խրկու ամիս օդդ փոշի տեղեաց թիզ մի: Խղեն ցոլմունք ահագին աստեղաց և շարժ սաստիկ:

Վբգլայ զերեք տարւոյ մեռածին հարկն ՚ի կե 758  
նդանցն խնդրէր բռնութեամբ. և հատաւ յամենայն յաշխարհէ ոսկի և արծաթ:

Վեռեալք ութ յանկարծակի յարեան և ոչինչ խօսեցան:

Խկն մարախ բազում և կարկուտ՝ մին հինգ լիտր,  
և փլոյց շինուածս բազում:

Կապիկք կատաղեցան և բազում վնաս արարին:

Խրեւեցաւ կին մի ՚ի Շուքրայ, որ ՚ի ծնէ կաթն ոչ եկեր և ոչ այլ ինչ կերակուր:

Ստեփանոս Աիւնեցին. տէր Խրեմ. Անաստաս, 771 A.220  
Խաչիկ և Դաւիթ վարդապետք մեծիմաստք:

Օքաղինա, զԹալին և զԱրենի կոտորեցին տաճիկք և գերեցին. զԱռու շեղ, զԱյամուէլ և զայլ ազատագունդս հայոց կոտորեցին ՚ի զատկին:

Ալեքսանդր.

A.230 781

Աստ պատէրազմեցան սաստիկ մոդք և տաճիկք :  
Լեռն առաքեաց առ Մահաղէ զգիրս յանէսի և  
յամրէսի :

ՅՈւռհայ գտաւ տապան մի հրէի և հազար ամաց  
գիր ՚ի վերայ, թէ „Հաւատամ” որ Քրիստոս ՚ի կուսէ  
ծնանելոց է և լոյս նորա ծագէ ՚ի վերայ իմ։ Նց-  
նպէս և ՚ի կոստանդնուպօլիս գտաւ տապան մի մա-  
րմարեայ և գերալ ՚ի վերայ. — «զինչ օգուտ է  
ծածկելիդ զիս, զի յաւուրս կոստանդեայ և մօր նորա  
Նեղինեայ արեգակն տեսանելոց է զիս» :

A.240

Պանդալեոն քահանայ գտաւ զպատմութիւն մատին  
Պետրոսի առաքելոյ:

791 Սահակ և Յովանէփ ՚ի կարնոյ քաղաքն կատա-  
րեցան: յՅդումայ յ, ՚ի քնէ պէք, հայ թիւն միջիւն:

Մակար կրօնաւորն դարձոյց զամիրայն:

A.250

Խաշնամահն սաստիկ և սովու ընդհանուր, մեկ օրն  
3000 ոդիք մեռան ՚ի կարնոյ քաղաքն:

Եկն թշնամին յԱսկի գուռն և առան բազումքա-  
լաքք:

Իբրէհիմ թագաւորեաց ՚ի հազտատ:

՚ի խառան գտան բազում կուապաշտք:

Շարժն ահագին, որ լերինքն կողատու յիրար հա-  
սանէին, վլաւ լեառն մի և արգել զԱմիրատ գետ օր մի:

Լապիկուոյ ջանայր զԱշոտ իշխանն քաղկեդոնիկ  
առնել իսկ հաւրէտ վարդապետն առաքեաց զԵանան  
սարկաւագն իւր, որ յաղթեաց Եպիկուուոյ և մեկնեաց  
զաւետարանն Յովհաննու:

Ապքի ամիրայ \*) զվանորայսն հայոց և զամենայն  
եկեղեցիս կողոպտեաց և ՚ի հազտատ յզարկեաց զո-  
սկին և զարծաթն:

\*) P. Առաջի ամբողջն.

Ամբատ Աքլաբսայ. սա է նախնին թառնդրակեցոց  
ապանդին:

Յաւուրս տէր Դաւթի Փարսման քահանայ Կա-  
կաղեցի որոշեալ ՚ի հայոց՝ ՚ի Վիրս գարձոց զՇո-  
նդէացիսն, այս է Ծագն, որ կան այժմ ՚ի հոռոմն:

Ծովն Անդրիանու ընկեց արտաքս (զձուկն) քա-  
ռասուն գիրկ երկայն և նյնչափ լայն:

Վագուսահլ էառ զԱմուրիա, ուր կայր հազար  
վանք կուսից, զորս ետ զօրաց իւրոց:

Մահագի եկն ՚ի հայս թագաւորեաց. իսկ Ամակ  
իշխանն հարկանէ զնա և սպանանէ զօրօքն, նաև  
զզօրավարն տաճիկ ասան:

Ի ինի անձրե 40 աւր, և վիշապաձուկն մի ելանէ  
՚ի կասրիական ծովէն և ուտէ զամենայն ձկունս կուր  
գետոյ:

Դաւութ՝ որդի Վագուսահլայ տաճիկ եդ օրէնս  
քրիստոնէի ոչ բառնալ զմեռեալս և ոչ խաչ վարել,  
կամ ժամ հարկանել, և ոչ խող պահէլ:

Աստ թամամ սուտ ռասուլն, և մարախ ձնձղկի  
չափ, որ եկն ՚ի Խաղըաց:

Նսրն և Պապոքն քրիստոնեաց եղեն:

Գուրգի՝ որդի Զաքարիա թաղաւորի, գնայ ՚ի  
Բաղտատ հրաշաղան յօրինուածովք:

Ասանեցիք զԱպուսէթ սպանին:

Երեւեցաւ հուր երեք գիշեր:

Եկն անձրե, որ կեղեկը զծառս և բերէր քարինա:

Ասջոր ամիրայն էառ զԱծիթայ և կոտորեաց զխաչն  
Եռունեայ:

Դապուհ արծրունի նահատակի ՚ի Բաղտատ:

Իուղայ կալեալ զամենայն իշխանս և զազատս  
հայոց՝ սպան, զկէսն մարմնով և զկէսն հոգւով:

ՊԵՏՈՒԹԻՒՆ

854 Օ, աքարիա կաթողիկոսն ի միում աւուր ընկալաւ  
զսարկաւագութիւն, գքահանայութրւն, զեպիսկոպոսու-  
թիւն և զկաթողիկոսութիւն:

Բարձաւ վարագոյր եկեղեցեաց հռոմի. զի ՚ի  
կոստանդնուպօլիս դ եպիսկոպոսք նստան կախարդք  
և կրապաշտք և սուտ պատարագ առնէին:

Ը արժ յազու հացան, որ ՚ի ՚իուին մեռան ՚ի միում  
գիշերի երկոտասան հազարք:

Վ ասիլ կայսրն առաքեաց Աշոտ իշխանին մասն  
՚ի տէրունական խաչէն և զիր ՚ի Փաւտ պատրիարքէն:

A.320 871 Յիսէ՛ Ը եխայ որդին, ետ ալամ և խաչ ՚ի վերայ  
Օ, աքարիա կաթողիկոսին:

Նիկիտն եբեր ՚ի հայս զհռոմայրի սթ նշանն, և  
զայսահարի զբոյցն, զոր բժշկեաց սւրբն Գրիգոր:

Համամ, որ և Յոհաննէս Բագրատունի, մեկնեաց  
զԱռակսն և եգ զվերջի գուրզայսն ՚ի գլուխ Ապա-  
ռսացն:

A.334 885 Թագաւորեաց ՚ի Հայս Աշոտ Բագրատունի յետ  
434 ամաց բառնալոյ թագաւորութեանն Արշակունեաց:  
Աստ հայր Գագիկ, հայր Ահարոն, տէր Մաշտոց,  
որ 40 ամ հաց ոչ եկեր:

Ը ապուհ Բագրատունի պատմագիր:

A.350 901 Տէր Յովհաննէս կաթողիկոս պատմագիր:  
Բարձաւ իշխանութիւնն տաճկաց և զօրացաւ թուր-  
քման Ավալուքն: Արք յիսուն իշխանք սասնցիք՝ նե-  
ղեալ ՚ի թուրքաց գնացին ՚ի Կիւլիկիա և Աստուծով  
տիրեցին սակաւ սակաւ:

Ը արժ սաստիկ ՚ի Թրակիա, որ պատառէր զերկիցն  
և զբագում եկեկեցիս զլանէր:

Ելանէր Թաթարն ՚ի Ղարազումայ. ասեն, թէ  
սպիտակ շուն առաջ նորդէր նոցա և զմոլորեալսն հա-  
շելով դարձուցանէր, մինչեւ հասին Արազ:

Թագաւորն Սմբատ տիեզերակալ շինեաց զԱնի քաղաք, որ թարբմանի Խումճ, սա կալաւ զԱռւլտանն և ծամեր ետ առնել Տաճկաց որպէս կանանց: Կալաւ և զԴիմետրն թագաւորն Վրաց և զբագում Վրացոց ձեռսն խազեաց, ուստի և Առիտչ անուանեցան: Օսա խաչեաց պիղծն Յուսուփի ՚ի Դուին. և կատարեցաւ մարգարէութիւն Մովսեսի Խորենացւոյն, որ ասաց, «Տագրատունիքդ թագաւորէք ՚ի Դուին»:

Յետ սորա թագաւորեաց Գագիկ արծրունի, որ գեղգին Աղթամար քաղաք շինեաց:

Թագաւորեաց Աշոտ Երկաթ:

921 A.370

Դաւիթ և Դուրգէն իշխանք կատարեցան ՚ի Դուին: Արաս թագաւոր շինէ զկարուց կաթուղիկէն և զկարմընջանորն, զկապուտքարն, զԴապրավանս և զշոռոմոսի վանս: Աս Եհար զԲէրն ՚ի կարս և զթաս գլխոյն յոսկի կալաւ և նովաւ ըմպէր գինի:

A.380

Տէր Անանիա կաթողիկոս զԱխւնեաց եպիսկոպոսն ընդ բանիւ արար և յետոց արքեպիսկոպոս անուանեաց:

Խոսրով անձեւացեաց եպիսկոպոսն արար զմեկնութիւն Աղօթամատուցին, զոր գրէր Ասհակ որդի իւր:

Շինեցան Հաղպատ և Անահին ՚ի Խոսրովանոյշ թագուհւոյն:

A.417

Աստ Եղե սկիզբն թագաւորելոյ Տագրատունեաց 981 A.430 ՚ի վերաց Վրաց, զի Դուրգէն ՚ի Վիրս և Սմբատ եղբայր նորա ՚ի Հայս թագաւորեցին: Աս զԱնւոյ պարիսպն ամրացոյց և զմեծ կաթողիկէն հիմնարկեաց:

Վահրամ իշխանն զմարմաշէնն շինեաց:

Աստ Աղուանից պատմագիրն Մովսէս կաղանկատուացի և Գրիգոր Նարեկացի և Ուխտանէս պատմագիր:

Առաջական:

Դաւիթ կուրապաղատն էառ զԱ'անծկերտ և Պար-  
րիէլ որդին Զօպնդարայ եհար զԱ'ամլան յԱ'պա-  
հունիս:

A.450 1001 Եինի սուրբն Գրիգոր աննման փ յԱ'նի, որ այժմ  
հանգուցեալ է: Եինի և Հաւուց թառն փ Պէռ-  
րդեայ իշխանէն Քեզւոյ:

Աստ Ատեփանոս Եսողիկ պատմագիր և Երիստա-  
կէս Լաստիվերոսացի և Ամառէլ հայրն կարմնջա-  
նորոյ զտօնացուցակն յօրինէր և սուրբ հայրն Եսոմ  
վարդեցի զՀոռոմագիրն կարգաւորէր. իսկ հայրն  
Այսէոն արար զԵդամագիրքն հարիւր և մետասան\*)  
ձառ փ խնդրոյ Աենեքերիմայ՝ թագաւորին Վասպու-  
րականի:

Տիմոթ վարդապետն արար զմեկնութիւն Երա-  
րածոց:

Կատրամիտէ թագուհին կատարեաց զկաթողիկէն  
Ենոյ:

Ամբատ Մագիստրոսն շինեաց զԲ'քնայրն:

A.460 1011 Եարժ սաստիկ յառաջաւորին. ընկպմեցաւ Եզ-  
նկայ ողջոյն, և մնաց միայն տունն կիրակոսի ողորմա-  
ծին: Իազում եկեղեցիք և բերդք տապալեցան:

Հուր անկեալ յԱ'նտիոք այրեաց զեկեղեցի Պու-  
կասու աւետարանչին:

Տուղրիլ Առւլտանի սպասալարն Քըիսարի էառ փ  
Հալպայ և փ Դամշխայ մինչ փ Քաղկեդոն և փ  
Տրապիկոն:

Իսկ Խոսրով՝ թագաւոր պարսից, զարմացոյց զաշ-  
խարհս իմաստութեամբ իւրով. — սա քըիստոսասէր և  
տօնասէր էր, ել թագաւոր փ Հայս և հնազանդեաց  
զՎիրս:

\*) P. 151.

՚Ի Տրապիզոն յաւուր Յայտնութեան հանդիսացաւ  
տէր Պետրոս կաթողիկոսն : Աս շինեաց զԱռումարի  
և զՇառաքար :

Վ էստն Աարգիս՝ շինող բերդից և վանորէից :

՚Ի հոկտեմբերի երեքն յերեկորեայ երկինք պա-  
տառեցաւ յեզրէ յեզր և անդունդք գոչեցին , և  
արձակեցաւ սատանայ ՚ի կապանաց մկրտութեան Քրի-  
ստոսի :

Վ ըեղակն խաւարեցաւ ՚ի քաղոցի 13 յուրբաթու 1031 A. 480  
՚ի միջօրէի և արձակեցաւ սատանայ ՚ի կապանաց խա-  
չելութեան Քրիստոսի :

Վ պրիատ իշխան երկոտասան հազար հեծելի... \*)

Աս շինեաց զկեչառուս և եհան զառուն Լրեանայ :

Օ կալափի կայսրն կուրացոց կինն Միխայելի, և  
՚ի տեղն գտին քալ մի և ՚ի վերայ գրեալ, — «թէ  
աստ թագաւորն խաւարի» :

Վուլիման թագաւորեաց ՚ի վերայ Հայոց և Հռո 1041 A. 490  
ոմոց և զսուրբն Պետրոս յԱնտիոք մղկիթ արար. և  
այս եղեւ սկիզբն իշխանութեան տանն Դանիշմանայ  
՚ի կապադոկիլիա:

Վ ոնոմախն երարձ զթագաւորութիւնն Շագրա 1045 A. 493  
տունեաց, որք 10 թագաւորք կալան զամս 160 :

Վ յնպէս եհան յաշխարհէս մերմէ զկաթուիկոսն  
տէր Պետրոս և նստոց ՚ի Աերաստիա, և անտի և  
այսր ոչ եկն առ մեզ կաթողիկոս : Խսկ ՚ի զարմէ  
բագրատունեաց մնացին ՚ի Վ իրս և ՚ի Մածնաբերդ և  
՚ի Նոր բերդ, որք կալան զբաղում գաւառս և շինեցին  
բերդս բազում : Խսկ Վ ոնոմախն, որ կալաւ զԳագիկ  
թագաւորն՝ ետ զիշխանութիւն երկրիս Պրիգորյ  
Մագիստրոսի, որ շինեաց զեկեղեցին Կեչառուաց : Աս

\*) Պահանջն է առաջ ինչ.

Պատոմութիւն

է որդին Հռում Վասակայ՝ շինողին Շնոյ, Կայենոյ  
և Կայծոնոյ, զոր յանգչտա սպանին ՚ի Աերկիլէ:

Աստ տիրեցին կիւլիկիոյ Որուբինեանքն. զատ  
արար Աստուած զրկելոցո. զի Հռումն երարձ զմեր  
թագաւորութիւնն, իսկ Աստուած զերկիր նոցա ետ  
Հայոց, որբ և այժմ թագաւորեն ՚ի Նմա:

A. 500 1051 Յովհաննէս վարդապետ Տարոնեցի արար Պա-  
տմութիւն Բագրատունեացն հրամանաւ տէր Պետրոսի:

Բագարատ թագաւոր Վրաց էառ զՏփխիս ՚ի  
Գափիրայ օգնականութեամբ Գագկայ թագաւորին կա-  
խեթոյ՝ որդոյ Յովհաննէս թագաւորին:

A. 510 1061 Բուռակալն Ամի արմնի ասլանն ՚ի Կարնոյ քաղաք,  
որ ՚ի ծագել արեգականն մարդ սպանանէր և ՚ի մտա-  
նել արևու ընդ կուսի ննջէր:

Հռնք զԳանձակայ զաշտն կոտորեցին և Ամբ  
Ասլանն զԱնի գերեաց և կոտորեաց: Առորբ հայրն  
Վարդիկ եկն ՚ի Ապերոյ առ Գագիկ թագաւորն Վա-  
նանգայ և շինեաց զՎանկոյս և ետես զՔրիստոս ՚ի  
կերպս ցաւալից աղքատի: Այս Գագիկ զկարս ՚ի  
Հռումն ետ և էառ զՕամընդաւ և անդ կաթողիկոս

A. 520 1071 Ճեռագրեաց զՎ կայսերն:

ԶԱՆՃԻԼ իշխանին զաքքն հանին Տաճիկք Ալ-  
րուսաղէմ և նա տարեալ զաքս ՚ի Հռում Եցոյց թա-  
գաւորացն: Աւ ժողովեալ եօթն կոմսունք եկին և  
հարին զՏաճիկն և թագաւորեցին Արուսաղէմի Վա-  
մուն, Պայմունն և կոնտոփրի և Տանկրի զամս 200  
մինչև ՚ի Աալահատին:

A. 530 1081 Միաբանեցան թուրքն և Տաճիկն, և զագգապետն  
իւրեանց եղին ՚ի Բաղգատ և իշտիքոյ անուանեցին,  
այսինքն է՝ յետնամնաց Մահմետի:

Կոնտոփրի իշխանն 30 ճիաւորօք եկն ՚ի Հռումէ  
Արուսաղէմ և զգեցաւ զգեստ կրօնաւորութեան, և

յետոյ հարկեալ ՚ի պատրիարքէն Երուսաղէմի՝ զգեցաւ  
զրահ և կռուէր ընդ անօրէնս : Աւ այս եղեւ սկիզբն  
սրբազան ազգին ֆրերաց, որ ասին Ելչալս :

Իշխաննքն հայոց զօրացան ՚ի կիւլիկիա և առին  
զԽաւատանէքն և զՄարաշ և զՇէհէսնի :

Գող Վ ասիլն էառ դՔեսոն և զՈւաբան :

Թագաւորն հայոց կիւրիկէ Վ րաց թագաւորն Դե-  
մետրէ և կաթողիկոսն Հայոց տէր Տարսեղ գնացին  
առ Մելիք Շահ սուլտանն և դարձան պատուօվ :

Դասիթ թագաւորն՝ որդին կիւրիկէի շինեաց  
զԼոսի և զայլ երկոտասան բերդս : Իսկ կիւրիկէ՝  
որդին Դաւթի, ետ ձեռնադրել Յովսեփայ Աղուանից  
կաթողիկոսին զտէր Տարսեղն և զգրան երէցն իւր՝  
զԱրգիս, ետ ձեռնադրել եպիսկոպոս Հաղբատայ, և  
յայնմէնտէ եղեւ աթոռ : Իսկ Բջնոյ աթոռն ՚ի տէր  
Պետրոսէ եղաւ յառաջ :

Սկիզբն նոր թուականին, որ կարգեցաւ ՚ի Յո-  
վհաննէս վարդապետէ Հաղբատացւոյ որ Սարկաւագ 1085 A. 534  
կոչեցաւ : Սա արար անշարժ տոմար ըստ այլոց  
ազգաց \*) Աշղե պատերազմ թուչնոց յերկրին Ամթայ,  
կռունկը և արագիլք ե՞ն գեսպանք առաքէին, և յետոյ  
կռուեալք յաղթեցան արագիլքն : Թագաւորն Պիծեն-  
կաց 600 հազարաւ եկն ՚ի վերայ Ամեքսին. իսկ քրի-  
ստոնեայքն 8 օր ազօթեալ կոտորեցին զնոսա :

Սուքման ամիրայն՝ կարուց եպիսկոպոսին ուրանալ

\*) P. Հանուպաշ ՚ե հալոց 28' յայտնաւեն ե, Տեհենի 8' ոռն  
շնչ առաջ ե աղեմի 12' հարուն, 30' առեպեսց. անենի 7' անհա-  
ստել. Տալենի 17' ելսոսել. Տարդաց 13' աճառն, Կաւառութի 7'  
առարուածածին. Կոռի 5' սուրբ խաչ, 9' աշունն. որին 9' յիշեակաց  
իշուշնելուն, 10' պահան. հալոց 10' յիշուն. 21' յայտնաւեն  
իշուշնելուն :

ետ, զի անշափ ոսկի խնդրէք: Այ աղքատացոյց դա-  
շխարհս հայոց անշափ հարկիւ:

**Ակիզբն շրջանի հինգհարիւրեկին:** Առվ սաստիկ

A. 544 1094 և հարկապահանջութիւն ՚ի Հայս:

Փալտուն ամիրայն առաքեաց զլ ասակ Պահլաւ-  
ունին՝ զորդի Գրիգորի Մազիստրոսի բազում զօրօք  
՚ի վերայ Շաղաբերդոյ, որք Խաբէութեամբ սպանին  
զԱնեքարիմ արքայն հայկազն և առին զերկիրն Ախ-  
նեաց: Լու այն եղեւ սկիզբն տիրելոյ Տաճկաց ՚ի վերայ  
նոցա:

Փռանկք անհամարք դիմեցին յարեելս օգնել  
քրիստոնէից. իսկ անաստուած Կալէքսն բազումն նե-  
նգեաց նոցա:

Տասն ազգք ծուռ զատիկ արարին վասն պատա-  
ռմանն իրիոնի:

**Երեեցաւ աստղ նիզակաձև ՚ի բազում աւուրս:**

A. 550 1101 Վասիլն և այլ իշխանք Կիւլիկիոյ տարան աղա-  
շանօք առ ինքեանս զտէր Գրիգոր կաթողիկոսն:

Յաւուր ճրագալուցին ոչ վառեցաւ լոյսն յԵրու-  
սաղէմ, զի փուանկն զսպասաւորութիւնն կանանց էր  
տուեալ:

Խզիլն էառ զլօռի, և զարքատ և զԱնահին  
այրեաց:

Թարոսն էառ զԱմուգայն և մկան զօրանալ:

Շարժ եկն ՚ի Խորասան, զմղկիթն և զ60,000  
մարդ և կին ՚ի վայր տարաւ:

Աստ Մարկոս ճգնաւորն ՚ի Երինն կոնկոնատ 65  
սմ հաց ոչ եկեր: Այ ասաց, թէ յաճախին չարիք  
մարդկան ՚ի վերայ երկրի, աւերին և փակին դրունք  
եկեղեցեաց և Երուսաղէմ դարձեալ առնու Թուրքն  
որ և եղեն իսկ: Հոռոմ արեղայ միջնապաշտ մոլո-  
րեցոց բիւրմի մարդ:

Չմեռն ՚ի մթին գիշերի որոտաց սաստիկ և 1111 A. 560  
անկաւ հուր ՚ի ծովն Խլաթայ, և մեռան ամենայն  
ձկունք և ծովն անկաւ զցամնքաւ և դարձաւ յարիւն:

Սպանաւ Խըղիլն և մեռաւ Մանուչէ ամիրայն  
Անւոյ:

Մերժեցան ՚ի հայրենեաց որդիքն Կիւրիկի թա-  
գաւորի:

Մեռաւ Սարկաւագ Վարդապետն և Գէորգ վա-  
րդապետն Մեղրիկ, որ զ՚իրազարկին կարգն սահմա-  
նեաց. և ՚աւիթ վարդապետն Լոււկայ որդին, որ  
զիանոնքն բացայացտեաց:

Ամբոխեցաւ թագաւորութիւնն Թոուրքաց ՚ի Խո-  
րասան և դարձեալ զօրացան Տաճիկք:

Յամառն կարմիր ձիւն երեկ չորս մատն:

Անձրե եկն ՚ի Պաղեստինէ և ՚ի նմա կաթիլք  
արեան, և ցող առաւօտուն արիւն լինէր:

՚աւիթ թագաւորն Վրաց եհար զլչղաղի և զՄՇ 1121 A. 570  
լիքն և էառ զ՚իագ, զՏէրունական և զԼՇի քաղաք:

Առութանքն Խորասանայ Անդիչէն կոչեցան Ժշ-  
տկուղէն ՚ի հետ:

Աբդլմումինիք յԱմիկ աղքէն են, որք գնացին  
փախստական ՚ի խալիֆայ եղբօրէն իւրեանց. անուանք  
նոցա՝ Աբդլլայ և Մամունայ. տարան երկու գիրք  
զԱեմիայն և զՔբեմիայն, և տըլքամով և ոսկով թա-  
գաւորեցին յարևմուտա:

Ապլսուար երեր ՚ի Խլաթայ զոսկի նալն և եղ ՚ի  
գլուխ կաթուղիկէին Անոյ: Խոկ քաղաքայիքն բերին  
զ՚իաւիթ թագաւորն Վրաց և բային նմա զգուռն  
քաղաքին. և նա կալեալ զԱպլսուար ՚ի Առնիթ  
առաքեաց որգով, և զնալն ձգեաց յեկեղեցոյն և  
իսակ կանգնեաց:

ՊԵՏԱԿԱՆ

1131 Գայ Փալտուն՝ որդի Ապլսուարայ և դարձեալ  
առնու զԱնի:

Առվ սաստիկ և սուր անողորմ:

580 Աստուտ՝ սուլտան Խոնացոյ եմուտ ՚ի կիլիկիա  
և եհար զնա Աստուած մժղուկաւ:

Պէմունդ արքայ Անդաքու բրինձ կոչեցաւ:

Դեմէտրէ թագաւորն եհար զՊարասընթուր աթա-  
պէկն ՚ի Նոր բերդին:

Օ Դամնիս և զԽունան էառ Ապուլէթ:

Աստ Պետրոս՝ Խոնդիայ որդին, և Յակոբ սքա-  
նչելին, իսկ Խորասու և Մարիամ ՚ի Քոբայրին կային  
կուսութեամբ:

Շահրիմանն էառ զԽութ: Ամնիլն զԽոլիճ ասլանն  
ծածկեաց ոսկով:

Ընդ երկուս բաժանեցան կրօնիւք Տաճկունք՝

Կէիք և Առնիք:

Եհար Պաղտոյն թագաւորն Խրուսաղէմի զԱքաս՝  
խալիփայն Մսրայ և էառ զամենայն դանձս տանն  
Ամիայ:

Շ երագաւ երարձ զխալիփայութիւնն յԵղիպտոսէ:

A. 590 1141 Շ արժի Գանձակ սաստիկ:

Զալշատարն առնու զամուրսն Խաչենոյ խաբէու-  
թեամբ:

Աահալադինն դունացի տիրեաց յԵղիպտոս և աւրի-  
նագրեաց միշտ գաւառէկապ լինել քրիստոնէից:

Աստղ գաւազանաձեւ երևեցաւ տասն աւր:

1151 Դարձեալ Փռանկք բիւրք բիւրոց եկին ընդ  
թիւրակս յաւգնութիւն Քրիստոնէից. իսկ Մանուէլ  
թագաւորն նենգեաց նոցա որպէս Ալէքսոն՝ և ոչ յա-  
ջողեցան:

Տէր Գրիգորիս առնու զԱռոմլայն և գնէ անդ  
զաթոռ իւր:

Ելտկուղ աթապակն էառ զԱմուկ ՚ի Խալտենկոց  
և զՍասունք ՚ի Պիրգենայ:

Յակոբ՝ որդին Սալիպայ, մեկնեաց զամենայն Հին  
և Նոր կտակարանս:

Կալաւ Դեմետրէ զՍալթուխն ՚ի դրանն Անոյ.  
իսկ Դաւիթ՛ որդին Դեմետրէի եհար զՄէլիք սու-  
լսանն և էառ զՏփիսիս:

Թագաւորն Գէորգի էառ զԴուին:

1161 A. 610

Վարժն տարաւ զԼզնկայ:

Տէր Ներսէս կաթողիկոսն փայլեաց յաշխարհի 913 A. 362  
ամենայն առաքինութեամբ և գիտութեամբ:

Դ սուրբ Խաչին քսաննեհինդ թիզ ձիւն երեկ, և  
ի Հնդիկս 14 թիզ, և մեռան ձկունք և թուչունք և  
ամենայն ազգք կենդանեաց:

Մուստին Խալիփայն հրաման ետ ընդ ամենայն  
երկիր եկեղեցիս շինել:

Սալահատինն էառ զԱրուսաղէմ:

1181

Գէորգի թագաւորն եքարծ զգողս և զաւաղակս:

Տէր Գրիգոր զՀռոմկլայի եկեղեցին շինեաց:

Ներսէս Լամբրոնացի՝ անյաղթ վարդապետ և  
թարգմանիչ գրոց:

Յորդանան տաճիկ նահատակեալ ՚ի կարնոյ քա-  
զաքի:

ԶԱՍարգիս Խաչենեցի Խաչեցին ՚ի Գանձակ:

Թամար թագուհին մեծացոյց զՕաքարիս և զՅո-  
հաննէս, որ և Խւանէ:

Մտեփաննոս վարդապետ ՚ի կարմիր վանքն:

Իգնատիոս վարդապետ, որ զՊուկասու աւետա-  
րանն մեկնեաց ՚ի Վափիրին:

Սարգիս վարդապետ, որ զԿաթուղիկէսն մեկնեաց  
՚ի Քարաշիթաւ:

Պէտքածուն:

Պապն շոռմայ օռատքեաց զվակասն և զպակն  
իւր տէր Գրիգորի շայոց կաթողիկոսի:

Աւամանայ թագաւորն զետամոյն եղեւ ՚ի Պա-  
տառիս \*):

Միխթար քահանայ յԱնի թարգմանեաց զխաւա-  
րումն արեգական և լուսնի ՚ի յոջիէ պարսկէ:

Լըզազի էառ զԵրուսաղէմ և նետ մի եհար ՚ի  
ձեղբանն սուրբ յարութեան:

A. 640 1191 Օաքարէ և իւանէ առին կարդաւ զաշխարհս-  
տաձկաց ՚ի կայենոյ մինչ ՚ի Շաղաբերդ՝ ՚ի Սամցյ-  
լտոյէ մինչ ՚ի Վաղարշակերտ աստուծով յաջո-  
ղեալք: ՚Իսոյնս թագաւորեաց Լևոն ՚ի կիլիկիա:  
Լզեւ ժողով ՚ի Լոփ վասն վրանաւ պատարագի և ոչ  
հաճեցան:

Դարձեալ յԱնի ժողովեցան, և սյլ ցըռւեցան:

1201 Վասակ՝ որդի շաղաքակայ և երեք որդիքն իւր՝  
Պապաքն, Մկղէմն և քաջն Պոռօշ՝ հեեալ ՚ի Խա-  
չենոյ, բազում արիութիւնս ցուցին յայլասեռս և բա-  
րութիւնս առ ազգս քրիստոնէից:

Մեռաւ թամարն և թագաւորեաց որդի նորա  
լաշան, և ասպատակեայ յԱրձէշ և ՚ի Վարագ, իսկ  
՚ի կողմն Պարսից մինչ ՚ի Օքէ՛: Օխամշի վանս  
Աղուանից կաթողիկոսացն աթոռ սահմանեցին:

Օիւանէ կալան ՚ի Խլաթ և դարձեալ դաշամբք  
խաղաղութեան թողին:

A. 660 1211 Մեռաւ Մէլիք Աւաթն և նստաւ Աշբափն :

Մեռաւ Օաքարէ, և նստաւ Շահանշահ:

Աստղ մի նիզակաձեւ երեեցաւ: Զափայ և Սա-  
փատայ թաթար նոյիքն հարին զլաշայն ՚ի կոտմայ:

Աստ սքանչելի արքն՝ Ստեփաննոս քահանայ՝ տէր

\*). P. պատմութիւն.

Յուսկայ որդին, և Աստուածատուր քահանայ՝ Եղբայրիանն որդի, որ յարոյց զապանեալն :

Դ փշախն եհար զլաշայն ՚ի Գանձակ :

1221 A. 670

Փոխեցաւ ՚ի Քրիստոս Վասակ՝ իշխանաց իշխանն

և էառ զդրօշայն որդի նորա քաջն Պոօշ :

Զալալագին սուլտանն Խորասանայ գայ փախստական ՚ի Ծաթարեկն և հարու զլաշայն և դիւանէ ՚ի կոտայսն՝ անձաւահոս առնելով ՚ի ձորն Գառնոյ :

Ատանէ Պոօշն ՚ի Դուին և կոտորէ զլսորազմն և զջաջիկն :

Չանկզ զանն սպանանէ զլմթան զանն և ինքն տիրէ ուլուսին և գնէ որտու ՚ի Պիաթ :

Խորազմն էառ զլսլաթ և զբազում աշխարհս :

Շառուսուդանն թագաւորէ Վրաց, իսկ Հաւքօթա 1231  
զանն բաժանէ զզօրս իւր յերիս առաջս ՚ի հարաւ,  
՚ի հիւսիս և ՚ի միջոց աշխարհիս անհուն բազմութեամբ : Հարաւայինն էառ զամենայն Հնդիկս և  
զծովեզերայս մինչև ՚ի ձկնակերն Եթովպիա . Հիւսիսայինն զնայ զվերին կողմամբքն կազբիական ծովուն՝ կոխելով զբազում աշխարհս՝ անցանէ ընդ Դանուբ գետ, գայ ընդ առաջ նորա կայսրն Ալամանաց և  
յետո նահանջէ զնա, իսկ միջին զօրքն հարկանեն ՚ի սուր սուսերի իւրեանց զՊարթևս և զՎրկանս, զՔուշանս և զԼյմամցիս, որ այժմ ասին Ալհուտք, զԽորասան, զՊարսս, զՎարս, զԱսպահ, զԱսպահան և զՄարպատական և կարգաւ կոխելով գան ՚ի Հայս, ՚ի Վիրս և յլզուանս, և ՚ի միում ամի, ՚ի ՈՉԵ (1236) թըւին՝ առին առհասարակ և կոտորեցին զաշխարհս, զբերգս և զբաղաքս : Խսկ թագաւ Վորնբաց և իշխանք աշխարհիս փախստական լինին : Եւ յետոյ իջանէ Աւագն ՚ի կայենոյ և երթայ առ Զարմաղանն և առնէ խաղաղութիւն : Խսկ ՚ի տեսանել նոյա զա-

ականական:

շխարհս Հայոց և Աղուանից՝ հաձեցան ինքեանց տեղի հանգստեան, զամառնային եղանակն տարածանելով ՚ի վերաց լերանցս Հայոց և զմեռն տածելով յամէնունակ և յինքնաբաւ դաշտն Շուանայ, որ ասի Վուզան:

A. 690 1241 Եհար Թաթարն դառնոց սուլտանն Ասուշման և էառ մինչ ՚ի կեսարիա և յետոյ մինչ յԱնտալիա և աւերեաց զԱմցիսէ: Թաճնալն և Գեկանն զանասունս աշխարհիս կրկին աւար առին:

Յովսէփ վարդապետն շինեաց զգերեզման Թադէսսի առաքելոցն: ՚Ի Գողթն դև մի ՚ի կերպս կնոջ կին եղեւ առն միում զբագում աւուրս:

՚Ի տօնի խաչին\*) ձկնէ կարկուտ երեկ: Դաւիթիթ Խծար առաբանող:

A. 700 1251 Մանկու զսնն տրեզերակալեաց. գնաց առ նա Հեթում՝ արքայն Հայոց և գունդստապլ Ամբատ՝ եղայր իւր, և պատուեցան ՚ի նմանէ:

Եկն մարախն և սակաւ վեասեաց:

Արդունն աշխարհագիր արար յարեւելից մինչև յարևմուտս:

Շարժմամբ կործանեցաւ Եղնկայն:

Հիւլաւու զանն եկն յաշխարհս. էառ զԲաղդատ Քաղաք:

Մեռուաւ Շաթոյ՝ զանն հիւսիսոյ, և նստաւ Ասրթախն քրիստոնեայ:

Փախեան երկոքին Դաւիթթ թագաւորքն Արաց ՚ի Առնէթ. իսկ զիշխանս և զազատորդիս զամենեսին պատանդ տարան յորտուն և քոչիշտան անուանեցին: Քակեցին զամենայն բերդս և զամենայն ամռար եկեղեցիս զայոց, զԱրաց և զԱղուանից ՚ի ձեռն

\*) P. ՚ի Ասչեն:

Խոճագիզ տաճկին, առին կրկին զՄուփարդին, նաև  
զԱլամուգ և զամենայն միջերկրեաց մինչև յԵղու-  
սաղէմ:

Արդունն զԱրացտունն աւերեաց. զԳալալն և 1261 Ա. 710  
զՕաքարէն սպանին:

Փանդուխտար սուլտանն Ազիպտոսի եհար զկողմ-  
նապահ թաթարին դՔիթբուղայն ՚ի Յորդանան:

Հիւլաւուն կոտորեաց զամենայն ջաթանս, որք  
են զանորդիս:

Երեեցաւ աստղ մի նիզակաձև զամիսս չորս: Մո-  
րցին եհար զզօրս Հայոց, սպան զթորոս և զերեաց  
զԱսոն՝ զորդիսն Հեթում թագաւորին, զոր յետոյ  
թափեցին:

Հառ և աւերեաց Մորցին զԱնտիոք Ասորոց:

՚Իղանութեան Ապաղային և ՚ի կաթողիկոսութեան  
տեառն Յակոբայ արարին ժողով ՚ի Հաղպատ և ՚ի  
Զագալանս:

՚Ի Խորասան օձէ կարկուտ երեկ երկու օր. երկրորդ  
աւուրն զառաջին աւուրն կերաւ:

Դակութարն փախեաւ ՚ի Առնեթ:

՚Ի կիւլիկիա շարժ մեծ եղեւ: Կուշաւուր և թա-  
վրէզ կործանեցան:

Արդունն կրկին համարեաց զաշխարհս:

Շարժ եկն ՚ի Վրացտուն և բազում կեսա արար:

Մորցին կրկին մտաւ ՚ի կիւլիկիա:

Շարժ եկն ՚ի Խլաթ և յամենայն սահմանս նորա:

Մանկու թամուրն և Ամփի եղիպտացին հարին 1281 Ա. 730  
զիրար ՚ի Համայ:

Փոխեցան ՚ի Քրիստոս աշխարհաշէն իշխանքն  
Պոօշ հայկաղն և Ապառն Արծրունի:

Արդունն սպան զԱհմատն և ինքն զան նստաւ :  
Տէր կոմիտաս\*) կաթողիկոս :

Կոտորեաց Արդունն զ՞ծալալտայքն և զայլ բա-  
զում նուինայս յաղագս ապստամբութեան, ընդ որս և  
զանմեղ թագաւորն Արաց զԴեմետրէ սպանին :

A. 738 1289 Մ'եռաւ թագաւորն Այսոց Լ ևոն և նստաւ Հեթում:  
Լոլե սաստիկ հացաթանգութիւն մարդոյ և անասնոյ :

Յովհաննէս աւետարանիչն հրամայէ վասն երե-  
քամեան և երեքամեան գործոց և սքանչելեացն  
Քրիստոսի, որ թէ զամենայն գրեալ էր՝ կարծեմ թէ  
և ոչ աշխարհս բաւական էր տանել : Իսկ թէ այս  
այսպէս է՝ որպէս և է իսկ, ապա զի՞նչ պարտ է տակ  
վասն ՚ի սկզբանէ աշխարհի անցիցն անցելոց, եթէ  
գրեալ էին : Իսկ մեք քայլելով ՚ի վերայ ժամանա-  
կագրաց անհուն զրուցաց՝ քաղելով զմի ՚ի հաղարաց  
և զերկուս ՚ի բիւրուց, բստ կարի հասու արարաք  
զձեզ՝ սրբազն հարք և եղբարք, կարգի թուոյ ժա-  
մանակաց, իսկ դուք աննախանձ մտօք ընկալարուք  
զսակաւ սաստարս ՚ի մէնջ՝ որպէս Լոլիայ ՚ի Աարե-  
փիթացւոյն. զի և այս ոչ ՚ի մէնջ իրակերտեցաւ, այլ  
՚ի Հոգոյն սրբոյ հրաշագործեցաւ, որում երկիրպա-  
գանեմք, և փառաւորեմք զանսկիզբն էութիւն և  
զմիամնական աստուածութիւնն Հօր անձնին և Որդոյն  
ծնեցելոյ և Հոգոյն բղխեցելոյ, անտրտում անպատում  
մեծվայելութեանն և արարչական զօրութեանն գոհու-  
թիւն և բարեբանութիւն յամենայն արարածոց նորա  
և յընդհանուր շնչոց և յանշնչոց՝ յերկնաւորաց և  
յերկրաւորաց ՚ի սանդարամետականաց, յաւիտեանս  
յաւիտենից, ամէն :

\*) P. Առաքունչին.









